

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին տալ եղբայրական օգնութեան Մայր Աթոռի Յանձնաժողովին երեք հազար ուրբլի գողթականաց գումարից և ուղարկել Երևանի Յանձնաժողովին երգուեալ հաւատարմատար Գրիգոր Տէր-Սաչատրեանին երեք հազար ուրբլի: 29 դեկտեմբերի, թ. 1991:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկելով Եղբայրական օգնութեան Մայր Աթոռի կարգադիր Յանձնաժողովի անունով տուած թ. 1990 Կոնդակի պատճէնը՝ յանձնարարուեց տալ այդ Յանձնաժողովին ժապաւինեալ մտից և ելից մատեան՝ ստացուած և ծախսուած գումարները մուտք գրելու համար: 29 դեկտեմբերի, թ. 1993:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒՍՏՐՈՒԹԻՎՆԵՐԻՑ

Կոնդակ Տիխիսի Սարգիս քահանայ Իփակեանի անունով, որով, Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդի և գիմնագիօնի վերատեսչի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց: 15 դեկտեմբերի, թ. 1939:

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒՈՇՆԵՐ.

Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի մակագրական պատուէրը. «Պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինոդին աւելացնել Մ. Աթոռի Գ. Ճեմարանի նախահաշուին (1914/13 ուսումն. տարուայ) մի հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար.», որուեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին աւելացնել Ճեմարանի 1914/13 ուսումն. տարուայ նախահաշուին ևս հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար: 5 դեկտ. թ. 596: